



## 66. ԲՈՒՆԱՐԻԿԸ ԾՈՒՌՆ ԱՂՋԿԱ ՀԵՔԻԱԹԸ

Թուրքի մե թաքավոր ա հըլնում: Էս թաքավորը 80 տարեկան ա հըլնում: Մե անքամ, վագրի խեստ չորերը փոխած, աղքատի ղըլլըր մտած, էթում են գեղրանքն ու քաղաքները ման գալու, որ տենան, թե ժողովուրթը ոնց ա աբրում, հիրանց մասին ինչ ա խոսում:

Թաքավորին են քֆրում, վագիրին են քֆրում, որ մե խոսք դուս բերեն: Մեկ էլ, ըստոնց նպատակն էն էր, որ տենան, որտեղ խորոտ խարս ու աղջիկ կա, հետո մարթ հըրկեն, գան տանեն: Էս մտքերով ման գալով, գացին մե գեղ, մե տուն ղոնախ հեյան: Տանտերը ղոնախասեր մարթ էր, շատ լավ ընթունեց, լավ պատիվ տվեց, հրմա չիմացավ, որ թաքավորն ու վագիրն են ղոնախները: Դեսից, ղենից շատ խոսացին: Խոսք բացին թաքավորի վրեն, ղոնախներից մեկը թաքավորին քֆրեց, որ լավ թաքավոր չի, ժողովրթին վատ ա պախում, ինչքան անմեղ մարթի գլոխ ա կղրել տվե:

Տանտերը չըհամփերեց, ասավ.—Այ ղոնախներ, թաքավորից ի՞նչ գործ ունեք: Մենք՝ հուր, թաքավորն՝ հուր, հընչի՞ եք իզուր տեղը թաքավորին քֆրում: Ձեր խացը կերեք, բարի բան ասեք, քուֆրից, անպատվելուց ի՞նչ օգուտ: Թաքավորը հիրա թախտին նստուկ, դուք հստեղ թաքավորին եք քֆրում: Էդ խոսկերը պախեք հիրանն ասեք, իմ տան մեչ էդ բաների մասին մի՛ խոսացեք: Ամեն մարթ հիրա յորղանի չափ թո հիրա ոտը պարզա: Թաքավորն էլ հիրա թախտին հաստատ մնա, խերն ու բարին էլ մեր մոտ մնա:

Ղոնախները որ տանտիրոջ խոսկը լսացին, խոսկը փոխին, հուրիչ բաների մասին խոսացին:

Էս մարթը մե խորոտ, շատ խորոտ աղջիկ ուներ, կայներ էր սուփրի մոտը, ծառայում էր: Հեյավ, որ տանտերը դուս էկավ:

Թաքավորը վագիրին բրթեց, ասավ.—Լավ տուն ա, հրմա բուխարիկը ծուռն ա:

Վագիրը թաքավորի ասածը խասկցավ:

Աղջկա մե աչկը մեչու ծուռն էր:

Աղջիկն էլ լսաց, թաքավորի ասածը խասկցավ, ասավ.—Բու-  
խարհիկը ծուռն ա, դուզ ա, հըմա դու ծուխը քաշելը տես, վառվելը  
տես, էտ ա գլխավորը:

Թաքավորը կարմրավ հիրա ասածից:

Վազիրն էլ խոսաց, ասավ.—Բուխարհիկը ծուռն ա, էտ դուզ ա,  
հըմա տունը լավ տուն ա, ծուխը դռնով էլ դուս կըգա, հեր օխնած,  
հո չի մնա տան մեջը:

Աղջիկն ասավ.—Թե որ ձեռ ընկնի, ձեր ասածը կըհըլնի, հըմա  
տանտերը դուռը պինդ ա փակե:

Թաքավորն ու վազիրը զարմացան էս աղջկա խելքի ու պա-  
տասխանների վրեն: Հելան գացին, էլ ման չեկան:

Մեկէլ օրը, որ վազիրը առավոտը պալատ էկավ, թաքավորն  
ասավ.—Վազի'ր, գիշերը շատ մտածեցի: Բուխարհիկը ծուռն աղջի-  
կը շատ խելոք ա, ես էլ կնիկ չունեմ, որոշեր եմ էտ աղջկան առնեմ,  
քո կարծիքը ո՞նց ա, խորուրթ կըտա՞ս:

Վազիրն ասավ, որ հինքը համաձայն ա, շատ ա խավնե, մեծ  
խելքի տեր աղջիկ ա:

—Դե գնա',—ասավ թաքավորը,—էտ աղջիկը ուզա' ընձի,  
ասա', որ հերեկվա քո դոնախը թաքավորն էր:

Վազիրը մե խուրջին ոսկի վերցուց, մե քանի թիկնապահ վեր-  
ցուց, էկավ էտ մարթի տունը: Էս մարթը հիմացավ, որ վազիրն ա,  
թաքավորն ա հըրկե, գլոխը կորցուց: Մտածեց, որ հերեկվա դո-  
նախները մե մատնություն արեր են: Լեղին կըրավ, չի հիմանում,  
թե ինչ անա: Հըմա աղջիկը վազիրին ճանչցավ:

Վազիրը ոսկին խուրջինով դրեց էս մարթի հառեչը, ասավ.—Բա-  
րի' մարթ, էս ոսկին թաքավորն ա հըրկե: Թաքավորն ուզում ա  
պսակվի քո աղջկա խետ: Բախտտ բերեր ա, աղջիկտ կըդառնա  
թաքուհի, էս առաջարկությանն ի՞նչ կասես:

—Թաքավորի հրամանին ո՞վ կանա դեմ էթա, հըմա ասեմ, որ  
իրավունքը տվեր եմ աղջկաս, աղջիկս ինչ պատասխան որ տա, էտ  
ա իմ պատասխանը:

Կանչեց աղջկան, ասավ.—Աղջի'կ ջան, մեր թաքավորը քեզի  
ուզում ա: Ես չեմ կանա թաքավորին հակառակ էթա, հըմա վազի-  
րին ասեցի, որ իրավունքը քոնն ա, հիմի ասա' տեսանք, ի՞նչ պա-  
տասխան ես տալու: Նշանի, թե խոսկ առնելու խամար հըրկեր ա  
էս խուրջինով ոսկին: Թե հոժար ես, արի խուրջինը վերցո'ւ տար,  
յա ձե'ող դիր խուրջինի վրեն, թե հոժար ես: Ես քեզի ոսկով չեմ  
ծախում, քո ազատ կամքը գիդա:

—Ի՞նչ ասիր, հայրի'կ, մե խուրջին ոսկի՞ են բերել խոսկ առնե-  
լու: Ծատ ա, ես հասարակ գեղացու աղջիկ եմ, բուխարհիկս էլ ծու-  
ռը: Մեկ էլ, որ ոսկին մեր ինչի՞ն ա պետք, ե'տ հըրկա, թո էթա:

—Ուսան՛րմ, բա ի՞նչ ես ուզում, որ նշան բերենք, ասա՛, լեզուս ինչ պտտում ա, թաքավորը կրճարա, խաղիները լիքն ա,—ասավ վազիրը:

—Գնա թաքավորին ասա՛, որ ծուռը բուխարիկով աղջիկը հտքան շատ նշանի ծախս չի ուզում: Թո հղրկա 20 դոչ, 30 աոյուծ, 40 որձ ձի, 60 կոտած եզ, 80 տախտակ, որ մարաքը ծածկենք:

—Ա՛յ խան՛րմ,—ասավ վազիրը,—ոսկին վերցո՛ւ, մարաքը հետո առանց փողի էլ կրծածկենք: Խելքտ հո խացի խետ չես կերե, այ խան՛րմ, թաքավորը լսա, համ կրգարմանա, համ էլ կրծծղա քո ասածի վրեն: Թաքավորը քեզի խելով ա հաչվում, դու էտ ի՞նչ զարմանալի նշան ես ուզում: Ղոչերը, եզները, ձիանքը, ասենք, տվինք, բա աոյուծները քո ինչի՞ն են պետք:

—էտի քո խելքի հիմանալու բանը չի, ա՛յ վազիր, ինչ որ ուզում եմ, գնա թաքավորին ասա՛:

—Լա՛վ, ոսկին թո մնա, էթամ ուզածներտ բերեմ:

—Չէ՛, վազի՛ր, էրկու անքամ նշան չեն բերի: Ոսկին տար տո՛ւր թաքավորին, իմ ուզածն էլ, թե որ կըտա, կրբերես: Քո ճամբեն կըպահեմ:

Վազիրը խուրջինը քցեց ձիան թարքը, գնաց: Որ տեղ խասավ, առանց հիրա տունը մտնելու, գնաց թաքավորի պալատը, թաքավորին պատմեց, թե՛ հսենց, հսենց, ոսկին չի ուզում, ուզում ա դոչեր, աոյուծներ, ձիեր, եզներ ու տախտակներ: Թաքավորը մտքի մեջ հրնգավ, որ տենա, թե ծուռը բուխարիկով աղջկա միտքն ինչ ա: Մյուս օրը թաքավորը մաջլիս հրավիրեց, որ հիմանա իշխանների կարծիքը:

Իշխաններն հավաքվան, մաջլիսը սկսվավ:

Վազիրն ասավ, թե աղջիկն ինչ ա ուզում ու ծծղաց:

—Վազի՛ր, մի՛ ծծղա, ծուռը բուխարիկով աղջկա ուզածը քո խելքի բանը չի, թո իշխանները խոսան:

Մե իշխան վեր կացավ, ասավ.—Թաքավո՛ր, հարցը շատ պարզ ա, գեղացի աղջիկ ա, բա որ դոչ ու եզ չուզա, ի՞նչ բղի ուզա: Աղջկա միտքն էն ա, որ խոր թավլեքը անասուններով լցա:

Մե հուրիչ իշխան ասավ.—Աոյուծ ա ուզում էն պատճառով, որ հըլա չուզած, թաքուհի չըդարձած տեղը հիրանը աոյուծի տեղ ա դնում, էգ աղջիկը պալատի խարջ չի:

Մեկէլ իշխանն ասավ.—էտքան անասունը տեղավորելու գործը հեշտ չի: Տախտակ ա ուզում, որ մարաք ու թավլա չինա: էստեղ զարմանալու բան չըկա, թաքավո՛ր:

Մեկ հուրիչ իշխան թաքավորին դուրը գալու խամար ասավ.—Թաքավո՛ր, աղջիկն ինչ որ ուզեր ա, հղրկա՛, թո նշանը վերցնա, բե՛ր պալատը, ըտրանով էլ գործը կըվերջանա, էտ ա իմ խորուրթը:

Նագիրն էլ ասավ.—Ոչխարն ուզեր ա խորովածի խամար, եզներն ուզեր ա խառնիսի ճաշի խամար, ձիանքն էլ ուզերա, որ մրցություններ կատարեն, առյուծներն էլ ուզեր ա, որ առյուծի նման տղերք բերեք, որ բերած տախտակները դնենք էտ տղերքի գլխի վրեն, հինքը էտ տախտակների վրավով, ոտը գետին չըղրած գա պալատը: Աղջիկն ուրախությունից չի ուզում ոտը գետին դնա:

Էս խելով ասած բանի վրեն բոլորը ծափ տվին, մաշալլա ասին ու ամեն մեկը մտածում էր, թե ո՞նց հելավ, որ հինքը էտ խոսկը չասավ:

Թաքավորը էլի նիյաթ նստուկ էր:

Վեր կացավ, տխուր-տրտում, ասավ.—Է, իշխաննե՛ր, նագիր՛ր, վագիր՛ր, բոլորտ մե գեղացի, բուխարիկը ծուռը աղջկա ոտի մատի չափ խելք չունեք, հըմա մըհալներ ու երգրներ եք կառավարում:

Իշխանները գլոխները կախին, ձեն չարին:

—Դե լացե՛ք, ինչ ա աղջիկն ուզում: Քսան ղոչ ա ուզում: էտ նշանակում ա, որ քսան տարեկանը ղոչի նման ա: Երեսուն առյուծ ա ուզում, էտ նշանակում ա, որ երեսուն տարեկանը առյուծի նման ա: Քառասուն ձի ա ուզում, էտ նշանակում ա, որ քառասուն տարեկանը ոռց ձիու նման ա: Վաթսուն եզ ա ուզում, ոչ թե բուղա: Եղը կռտած ա, նշանակում ա 60 տարեկանը կռտած եզան նման ա: Ութսանասուն տախտակ ա ուզում, նշանակում ա, որ 80 տարեկանի մեռնելու, դագաղի մեջ դնելու ժամանակն ա:

Էդ ուզածները ընձի վրա ա ասե, բոլորն էլ դուզ ա: Զոռով բերելու իրավուք չըկա: Էրանեկ բուխարիկը ծուռը աղջկան առնողին:

Վագրին ասավ.—Վագիր՛ր, գնա էդ աղջկան ասա՛, որ թաքավորը քո միտքն հիմացեր ա, հըմա Աստված քո ծուռը բուխարիկի ծուխը չըկղրա: էտ ծուխը թո բալան-բալան դուս գա: